

ՁԱՅՆԱՎՈՐՆԵՐԻ ԵՎ ԵՐԿՆՁՅՈՒՆՆԵՐԻ ՀՆՁՅՈՒՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԱԳՈՒԼԻՍԻ ԲԱՐԲԱՌՈՒՄ

Ա. Գ. ՁԱՔԱՐՅԱՆ

Ագուլիսի բարբառը, որով խոսել են Մեծ Հայքի Վասպուրական աշխարհի Գողթն գավառի բնակիչները, այժմ դադարել է գոյություն ունենալուց: Իբրև կենդանի, ամօրյա գործածական լեզու՝ գոյատևել է մինչև 1919թ.՝ Ագուլիսի ավերումը: Գողթն կամ Գողթան գավառն ընդգրկել է հետևյալ հայաբնակ գյուղերը՝ Վերին Ագուլիս, Ներքին Ագուլիս, Հանդամեջ, Դիսար, Տանակերտ, Ռամիս, Քաղաքիկ, Փստակա, Յղնա, Բիստ, Մսրվանիս, Ալլահի, Խուրս: Բիստ, Մսրվանիս, Ալլահի և Խուրս գյուղերի բնակիչները Ագուլիսի բարբառով չեն խոսել. նրանց խոսակցական լեզուն մոտ էր Ղարաբաղի բարբառին, մինչդեռ Ագուլիսի շրջակայքում գտնվող հայաբնակ ինը գյուղերը բնիկ գողթանցիներ էին և խոսում էին այդ բարբառով: Գողթանի բոլոր գյուղերի խոսվածքները զգալի տարբերություն ունեն բարբառից, որը հատկապես ներկա է Յղնայի և Ռամիսի խոսվածքներում: Բայի խոնարհման ժամանակ վերջիններս հատկապես մոտ են ս ճյուղի բարբառներին: Բնակիչներին տրված զույ անունը անցել է բարբառին և կոչվել զուկերեն:

Ում ճյուղին պատկանող եռաստիճան բաղաձայնական համակարգ ունեցող այս բարբառում, գրաբարի համեմատությամբ, մեծ փոփոխությունների են ենթարկվել ձայնավորները: Ի տարբերություն ձայնավորների՝ «... բաղաձայնները բացարձակապես հավատարիմ են հին հայերենին և այս կողմից գերազանցում են բոլոր բարբառներից», - հավաստում է վաստակաշատ լեզվաբան Հր. Աճառյանը:¹

Ագուլիսի բարբառը բավականին շատ է հեռացել հայերենից, նույնիսկ դարձել դժվար հասկանալի, հանգամանք, որը պայմանավորված է հատկապես ձայնավորների բազմաթիվ ու բազմապիսի ձևափոխություններով: Արտասանական զգալի տարբերություններ կան նույնիսկ բարբառի այլևայլ խոսվածքներում: Հր. Աճառյանի վկայությամբ², Ներքին և Վերին Ագուլիսների աննշան հեռավորության պայմաններում անգամ բնակիչների

¹ Հր. Աճառյան, Քննություն Ագուլիսի բարբառի, Ե., 1935, էջ 16:

² Ագուլիսի բարբառից առաջին անգամ նշումներ է բերել Շրյոդերը «Գանձ արամյան լեզվի» գրքում (1711): Բարբառի ուսումնասիրության համար հարուստ նյութ է պարունակում Ս. Մարգարյանի «Ագուլեցոց բարբառը (զուկերի լեզուն)» (մասն 1-2, Ս., 1883): Բարբառի համառոտ նկարագրության հեղինակը բազմավաստակ լեզվաբան Հր. Աճառյանն է (Քննություն Ագուլիսի բարբառի, 1935), այնուհետև նրա նկարագրին անդրադարձել են Ար. Ղարիբյանը (Համառոտություն հայ բարբառագիտության, Ե., 1941, Հայ բարբառագիտություն, Ե., 1953), Ա. Գրիգորյանը (Հայ բարբառագիտության դասընթաց, Ե., 1957) գրքերում: Բարբառի ուսումնասիրությունների ցանկը տե՛ս նաև Հռ. Աճառյան, Քննություն Ագուլիսի բարբառի, էջ 12, 13, 14:

խոսվածքն ունեցել է նկատելի տարբերություններ, որոնք պայմանավորված են գերազանցապես ձայնավորների արտասանությամբ՝ ա – ա̇, օ – օ̇, ու – ու̇ և այլն:

Բարբառն ունի ինը ձայնավոր՝ ա, ա̇, է, ը, ի, ու, ու̇, օ, օ̇:

Ազուլիսի բարբառում ձայնավորների վոկալիզացիաները բավականաչափ շատ են: Առանց չափազանցության կարելի է հավաստել, որ ձայնավորներից յուրաքանչյուրը կարելի է փոխարինել համարյա բոլոր ձայնավորներով, և այն «... կատարվում է առանց օրենքի կամ առանց որոշակի օրինաչափությունների...»³:

Առանձին բառերում ձայնավորներն առավել հին ծագում և կիրառություն ունեն, քան հետագայում հնչյունական փոփոխությունները: Դրանց շարքին կարելի է դասել եղունգ>էղունգ, աեր>տայր բառերը:

Հաճախ ա ձայնավորը իմաստային տարբերակումներ է մտցնում նույն հնչյուններից կազմված բառերի մեջ. օրինակ՝ մհալ նշանակում է տեղ, բնակավայր, իսկ մհալ՝ ուշադրություն, դավա՝ դեղ, իսկ դավա՝ ուղտ: Համին նշանակում է համեղ, իսկ համին՝ նույն: Ա-ն իր արտասանությամբ ա և է ձայնավորների միջին աստիճանն է և բազմաթիվ դեպքերում փոխարինվում է է ձայնավորով: Այս երևույթը ներկա է նաև Արցախի բարբառում: Այսպես՝ գնործի կամ գերծի, նարսի կամ ներսի, հիլարի կամ հյլերի, իշտահ կամ իշտե, բւրի կամ բերի, գիծած կամ գիծեծ, ոհրւծ կամ ոհրեծ, քչնֆի կամ քչեֆի, մակնի կամ մեկնի և այլն:

Միավանկ բառերի փակ վանկում ա-ն սովորաբար վերածվում է օ կամ ու ձայնավորների՝ ափ>օփ, ճաշ>ճօշ, այս>սօ, այդ>դօ, հաց>հօց, մահ>մօհ: Միավանկ և երկվանկ բառերում երբեմն էլ ա-ն մնում է անփոփոխ, ինչպես՝ աման, մառն, մաղ, խաղ>հաղ:

Ա>ա̇ - ժանգ>ժանգ̇, չանչ>չանչ̇, դարդ>դարդ̇, կառու>կարդի, շարաք>շարք̇, ոարման>ոարման̇:

Ա>է - առտոտ>էխտոտ, շաղ>շէղ, թուշ>թշէղ: Բազմավանկ՝ բառերի սկզբում և բառամիջում ա>ը, օրինակ՝ աղաման>ըղաման, արտասուք>ըտասուք, հարսանիք>ըրսանիք, ճանաչել>ընճանչել, նշխարք>ընշխարք. մկրատ>մեկրատ, մախաք>մեխաք, բաշխել>բեշխել:

Ա>ու, ու̇ - թանք>թուք, ծամ>ծում, համ>հում, չափ>չում, ծանո>ծումն. ժամ>ժում, բանք>բում, գալ>գուլ, ձու>ձու (ձուլ):

Ա>օ - դառ>դօռն, վար>վօր, վարդ>վօրդ, ոափ>դօփ. բահ>բօհ, բագ>բօգ, գառն>գօռն, հառուր>հօրուր:

Ա>օյ - կալ>կօլ, ծալ>ծօլ:

Ձայնավորով սկսվող բայերը, որպես օրենք, ստանում են ն նախամասնիկը՝

ասում են>նահամ րմ, ուտում են>նատամ րմ, ուզում են>նիզամ րմ և այլն:

Ազուլիսի բարբառում ամկա է նաև արևելահայ բազմաթիվ բարբառներից բնորոշ բառասկզբի ե հնչյունի փոփոխությունը՝ և՛ միավանկ, և՛ բազմավանկ բառերում:

Բառասկզբում՝ ե>ի, ինչպես՝ երք>իք, երբ որ>իք օր, եզ>իցն, եկ>իկ, ես>իս, երեք>իրիք:

Բառամիջում՝ ե հնչյունը շեշտի տակ դառնում է ի՝ Թիֆլիսի բարբառի մեծամասամբ՝ թեի>թիի, թև>թիլ, ձև>ձիլ, խեղեղ>իեիլ, գետ>գիտ:

³ Առ. Ղառիբյան, Համառոտություն հայ բարբառագիտության, Ե., 1941, էջ 213:

Արցախի. Մեղրու և հայ բարբառների նման Ազուլիսում ևս ը-ից առաջ է հնչյունը արտասանվում է ա: Ըստ Էդ. Աղայանի՝ այս երևույթը թելադրված է բառահիմքի ձայնավորի առկայությամբ⁴. եռագ>առագ, երկաթ>արկաթ, երկանք>արկանք:

Ե հնչյունի համար ունենք մասնակի հնչյունափոխության դեպքեր:

Բառասկզբում՝ ե>ը - երկկամունք>ըրկամունք, եռեզկհն>ըռզանհն, երանի>ըրայնակ, երեխա>ըրխո կամ ըխո:

Բառամիջում՝ ե>ը - երեկ>ըրկէ, ղոկէ, դեղնուգ>ըրղնուգ:

ե>օ - երդում>օրդում:

Գրական կամ կրոնական վտխառնություններում է-ն մնում է անփոփոխ՝ լեզեղագի, լեքիսկօյօս, մէռավօղ կամ մէղավոռ:

Ե հնչյունի փոփոխության մասնակի դեպքեր ևս կան՝

Ե>ւ - բերան>բւրան, փեսա>փւսսւ, ռեհան>բւնհւն:

Ե>ու, ու - տաշեղ>տաշուղ, մեկ>մուլն, լեզու>լուզու:

Ե>օ - ուղեղ>ըոօղ:

Է>ւ - թե>թւ, քեռի>քւոռի:

Է>ի - սղվես>ւղվիւ, անեծք>անհսկ, ձեր>ձիը, մեր>միը:

Գրաբարյան գաղտնավանկ ը ձայնավորը բոլոր դեպքերում արտասանվում է ը, ինչպես՝ գգուիլ>գըգվիլ, գկեռ>գըկէռ, խմել>խըմիլ, մնալ>մընօլ:

Ազուլիսի բարբառում ը ձայնավորը կարող է վերածվել տարբեր ձայնավոր հնչյունների: Այսպես՝

Ը>ւ - ընկույզ>ւնգուզ:

Ը>է - գըղակ>քէղակ:

Քմային հնչյուններից հետո՝ ը>այ - քըսակ>քայսակ:

Ը>ի - գըլխավոր>գիւխավոռ, սըրբել>սիորբիլ, գըգել>գիձիլ:

Լիահունչության ազդեցությամբ՝

Ը>ու, ու - սըղոգ>սուղուգ նաև սոռուգ, կըճուճ>կոճոճ:

Ը>օ - կըրծել>կօրծիլ, կըտապ>կօտափ:

Միավանկ և երկվանկ բառերի շեշտակիր ի-ն վերածվում է ա. ււ ձայնավորի՝ իւ >ւււ, մի >ւււ, ծիրան>ծււրուն, պիտի>ւււտի, սիրուն>սււրուն, թոնիր>թարան:

Հայրենի որոշ բարբառների օրինաչափության համաձայն՝ Ազուլիսի բարբառում ևս ի-ն վերածվում է ա-ի՝ կնիկ>եմակ, տիկ>տակ, ծիծաղ>ծայծաղ, միս>մայս, միտք>մայտք, սպիտակ>սպայտակ:

Բառասկզբում և բառամիջում՝

Ի>ու, ու - ակիշ>ակուշ, չամիչ>չււմուչ, ինչ>ունչ, ինչքան>ունչքան, կարմիր>եարմուր:

Ի-ն սղվում է կամ վտխվում է ը-ի - երկկամունք>ըրկամունք, ծիրանի>ծըւնի, գիշեր>քոշիը, մխիթարիլ>մխրթարիլ:

Ի-ն նույնությամբ պահպանվում է մի շարք բառերում՝ կարիճ, անիծ, պանիր>պանդիր:

Որոշ բազմավանկ բառերում ո-ն դառնում է ա, ււ կամ է՝ ոտներ>ատնաղ, ոչխար>էխչաղ, մորթել>մառթիլ, ջորի>ջէրի, ոլորել>լոււնրիլ, մոլորիլ>մոււնրիլ:

⁴«Երկվանկ բառերի սկզբում շեշտված է-ն դառնում է ա, եթե հաջորդող վանկի ձայնավորն է ա» (Էդ. Աղայան, Մեղրու բարբառը, Ե., 1954, էջ 31):

Բառասկզբում մախաշեշտ ը-ի դիմաց ունենք ը, ուրերել>ըլլանի, ողո-
ղել>ողողի, ոսկորոտիք>ոսկորոտիք, ործկտալ>ործողու, որոտալ>
որոտու:

Գրական կամ կրոնական վտխառություններում ը-ն փոփոխության չի
ենթարկվում՝ քազաւոր>քազավոր, եպիսկոպոս>էպիսկոպոս, մեղաւոր>
մեղավոր կամ մեղավոր:⁵

Մի շարք բառերում ունենք ը>ա վտփոխությունը, որի համար հմարա-
վոր չէ առանձնացնել ընդհանուր օրինաչափություն՝

ը>ա - որոճ>արոճ, մորթի>մարթի, սովորել>սվարի, խորովել>խա-
վի:

ը>է - որդնած>եդնած, որձակ>եձակ, ոչխար>էխար, կոճակ>կէճակ,
ջորի>ջէրի, հոգի>հէգի, փորձել>փէրձի:

Թիֆլիսի բարբառի մեծ Ազուլիսի բարբառում ևս ունենք ը>ու փոփո-
խությունը: Տարբերությունը ներկայանում է բառասկզբում, երբ ը-ի դիմաց
ունենք պարզ ու ձայնավոր:

Բառասկզբում և բառամիջում՝

ը>ու - ոսկր>ուսկուտ, ոտն>ուտ, ոսպ>ուսպ, բողկ>բուխկ, ծոռ>ծուռ,
Մարկոս>Մարկուս, քարոզ>քարուզ, ձիավոր>ձիավոր:

Մի շարք բառերում ունենք մահ ը>ու վտփոխությունը: Երկվանկ բառե-
րում հատկապես կրկնվող ը-ն երբեմն դառնում է ու՝ սողոզ>սուղուզ, կոր-
կոտ>կուրկուտ:

Գրական և կրոնական բառերում ը>օ՝ եպիսկոպոս>եքիսկոպոս, կաթո-
ղիկոս>կաթիսկոս, հաջողում>այողում:

Ու ձայնավորը ենթարկվում է մի շարք օրինաչափ փոփոխություննե-
րի, ինչպես՝

Ու>է - փուլ>փէլ, կուշտ>կէշտ, հրուշակ>հրէշակ, կուլ տալ >կէլ տու,
վտուլ գալ>փէլ գուլ, մանուշակ>մնէշակ և այլն:

Ու>ո՛ւ - բուռդ>բուրդ, լուծ>լուծ, թունդ>թունդ, ջուր>ջուր, ոռ>ռու,
լու>լու, գունդ>գունդ:

Ու>օ - թութ>թութ, թութ>թութ, սութ>սութ, ութ>ութ, սութ>սութ, թութ>թութ,
թութութ>թութութ, կատր>կատր (տամիք), արուզ>արուզ, սուզ>սուզ:

Ու-ն մնում է անփոփոխ՝ խուփ>խուփ, հում>խում, սութ>սութ:

Կա մահ ու-ի մասնակի փոփոխություններ՝

ու>ը - բուրվառ>իւրվառ, երկուշաբթի>ըրկշաբթի, ուռել>ըռուռի:

Բառավերջի ութում ածանցը դառնում է օթին կամ օթին: Հետագայում
գրական լեզվի ազդեցությամբ կիրառվել է մահ -ութում՝ ծումրութօթին,
միծօթին, հիմաութօթին, համիեութօթին և այլն:

Գրաբարի երկրաբառները Ազուլիսի բարբառում վերածվել են պարզ
ձայնավորների կամ ձայնավորից ու բաղաձայնից կազմված հնչյու-
նախմբի, ուր յուրաքանչյուրը դիտվում է որպես մի պարզ հնչյուն: Երկ-
հնչյուններ պահպանվել են հատուկ նշան բառերում: Ե, ը երկհնչյուններով

⁵ Առանձին դեպքերում էլ բառը, իմաստային տարբեր գործածությամբ պայմանա-
վորված, մի դեպքում կարող է հնչյունավախվել, այլ դեպքում՝ ոչ, օրինակ՝ քազա-
վորը, երբ գործածվում է միասնական, արքա իմաստով, իսկ մեղավոր բառը՝ կրոնա-
կան, ապա հնչյունափոխություն տեղի չի ունենում, մինչդեռ քազավորը՝ փեսա-
ցու և մեղավորը՝ ամօրյա՝ սովորական իմաստով օգտագործվելու դեպքում
հնչյունափոխվում են:

սկսվող բառերը գրական հայերենից անցել են բարբառին՝ պահպանելով համապատասխան արտասանությունը:

Բառասկզբում այ երկրաբար առնվող հայ բարբառների օրինակափոխյա՞մբ դառնում է ա, օրինակ՝ այս>աս, այդ>ադ, այն>ան, որոնք պահպանվում են և բաղադրյալ ձևերում՝ աստեղ, աստի, անդի, ասար, ատթան և այլն: Բառասկզբում այ-ը դառնում է է՝ ալծ>էծ, այգի>էգի, այգ>էգ:

Միավանկ բառերում այ-ը հնչում է այնպես, ինչպես գրական հայերենում՝ հայր, մայր, կայծ: Բառասկզբում և բառամիջում հին հայերենի ալ երկրաբար բաղաձայնից առաջ դարձել է օ, ինչպես՝ օգնել>օրնիլ, օգուտ>օրուտ, օդ: Բառամիջում ալ-ը դառնում է ու կամ օ, ինչպես ա-դօքք>ադդօլ, ամթք>ամթ, իտսել>իտսիլ, ծանթք>ծանթ:

Չայնավորից առաջ և բառավերջում ալ երկրաբար համար ունենք ձայնավորի և բաղաձայնի կապակցություն, օրինակ՝ բախտատր>բախտավոր, քազատր>քազավոր կամ քազավոր, հաւատ>հավասա, աւելուկ>ըվելուկ:

Բառավերջում ալ-ի համար նշենք հետևյալ բառերը՝ կաքալ>կաքավ, կտալ>կտավ, առաւ>առաւով, գաւ>գով: Բաղաձայնից առաջ ալ երկրաբար արտասանվում է պարզ օ, և ինչպես հայտնի է, այս երևույթը հայերենում սկսել է գործել X դարից: Նման արտասանությունը բնորոշ է և Ագուլիսի բարբառին:

Նախաշեշտ բառերում իլ երկհնչյունը արտասանվում է ը՝ արիւնիլ>որոնիլ, արիւնուտ>որոնուտ:

Եվ>իվ - արել>արիվ, տեղել>տիղիվ, անձրել>անձրիվ և այլն:

Եվ>ը - որբելայրի>որբովարի, թեթվանալ>թթովանիլ:

Եվ>յ - երելալ>ըրվոլ:

Եվ>սւլ - ձկել>ձկիլ, ալկոր>իլավոր և այլն:

Գրաբարյան եւ երկրաբար Ագուլիսի բարբառում վերածվում է պարզ ա, ա ձայնավորի, ինչպես՝ գորեան>գարան, կորեակ>կորակ, անկեալ>անցալ:

Եւ երկրաբար ղիմաց ի ձայնավոր ունենք գրաբարյան անցյալ դերբայի եււ վերջավորության մեջ՝ ածեալ>ածիլ, նստեալ>նստիլ:

Գրաբարյան եււ եռաբարբառի համար բարբառում ունենք էլ՝ սեալ>սել, բարեալ>բարել:

Եււ եռաբարբառ վերածվում է ալ-ի՝ քրիստոնեալ>քրիստոնյա կամ ալ-ի, ինչպես՝ կրեալ>կորան:

Եի հին հայերենի երկրաբար բառավերջում դառնում է ձայնավորի և բաղաձայնի կապակցություն՝ սոռ>սորիվ, թեթ>թիթիվ, տեռ>տիրիվ:

Բառամիջում իլ երկրաբար ղիմաց բաղաձայնից առաջ ունենք պարզ ու, ու ձայնավոր՝ աիւտ>ալուտ, արիւն>արուն, սիւն>սուն, ձիւն>ձուն: Այս օրենքը չի գործում -ութիւն վերջածանց ունեցող բառերում:

Բառավերջում իւ>իվ՝ ազնիւ>ազնիվ, հաշիւ>հաշիվ, աատիւ>աատիվ: Չայնավորից առաջ իւ>իվ՝ հիւանդանալ>հիվրդանիլ, դիւան>դիվան:

Գրաբարի ոյ-ը այստեղ դառնում է ու, ու ձայնավոր, կամ ո՝ - կաաուտ>կաալուտ, ուու>ոււ, թոյլ>թուլ, անոյշ>անուշ, ոյժ>ուժ:

Ուա. ուե, ուէ. ուի ձևերի մեջ ու-ն դառնում է վ բաղաձայն, օրինակ՝

աղուիս>աղվիս, լուսնալ>լվննի, նուագ>նվագ, նուադի>նվադի, արիւն-
լուալ>ռռնլւլօ, ազնուական>ազնոլական:

ЧЕРЕДОВАНИЕ ГЛАСНЫХ И ДИФТОНГОВ В АГУЛИССКОМ ДИАЛЕКТЕ

М. Г. ЗАКАРЯН

Р е з ю м е

Каждый гласный звук в Агулисском диалекте может превратиться в любой другой гласный. Дифтонги грабара стали простым гласным или гласным с согласным. Слова с начальными дифтонгами *ի(e)*, *ը(во)* вошли в диалект из литературного языка, сохранив соответствующее произношение.

Дифтонгов в диалекте нет.